# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«_31_» _մայիսի_ 2011թ. Արձանագրություն N _8_

ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N _99-Ա_

գեղեցիկ

### ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ «Լ.ԻՇՏՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ը ԼՈՒԾԱՐԵԼՈՒ, ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ԱՆՇԱՐԺ ԵՎ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՐԶԱԴՊՐՈՑԻ ՄԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրիի քաղաքապետարանին է դիմել «Շիրակ» ֆուտբոլային ակումբ» ՀԿ-ն, ներկայացրել է Շիրակի մարզում սպորտի զարգացման ծրագիրը, որը ներառում է «Շիրակ» ֆուտբոլային ակումբի հիմնական թիմում ներդրումների կատարում, մանկապատանեկան թիմի կանոնավոր մարզումների կազմակերպում, Շիրակի մարզում «Շիրակ» ֆուտբոլային ակումբի աջակցությամբ երիտասարդների շրջանում ֆուտբոլի նկատմամբ հետաքրքրության բարձրացում, ակումբում մարզվել ցանկացողներին ակումբի մանկապատանեկան թիմի հետ մարզվելու հնարավորության ընձեռում, Գյումրիի մարզադաշտի եվրոպական չափանիշներով վերանորոգում:

Նախորդ 10 տարիների ընթացքում Շիրակի մարզում ֆուտբոլի զարգացմանն ուղղված խոշոր ներդրումներ չեն կատարվել, ինչը հանգեցրել է «Շիրակ» թիմի վարկանիշի անկման, Շիրակի մարզում և Գյումրի քաղաքում ֆուտբոլասերների և պատանիների հետաքրքրության անկման: Մարզումների, ինչպես նաև պրոֆեսիոնալ խաղերի անցկացման համար օգտագործման ենթակա չէ Գյումրիի մարզադաշտը: Իշտոյանի անվան ֆուտբոլի դպրոցը ֆինանսավորվում է Գյումրիի քաղաքապետարանի կողմից, սակայն, միջոցների բացակայության պատճառով մարզադպրոցի շենքը երկար տարիներ հնարավոր չէ վերանորոգել, մարզադպրոցի սաների մարզման համար հնարավոր չէ ապահովել պատշաճ պայմաններ:

«Շիրակ» ֆուտբոլային ակումբ ՀԿ-ի ներկայացրած ծրագրի համաձայն Ակումբը իր ներդրումներով մեծապես կնպաստի Գյումրիում և Շիրակի մարզում ֆուտբոլի զարգացմանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ և 20-րդ կետերով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի է/ ենթակետով, հաշվի առնելով ակումբի ներդրումային ծրագիրը և հիմք ընդունելով «Գյումրու քաղաքապետարանի Լևոն Իշտոյանի անվան մարզադպրոցի աշխատանքների հետագա կարգավորման մտադրությունների վերաբերյալ» հուշագիրը՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Շիրակ» ֆուտբոլային ակումբի զարգացման նպատակով որպես անհատույց ներդրում ակումբին փոխանցել Գյումրու քաղաքապետարանի Լևոն Իշտոյանի անվան ֆուտբոլի մարզադպրոցի բոլոր սաների նկատմամբ իրավունքները:
2. Մարզադպրոցի անշարժ և շարժական գույքը 10 /տասը/ տարի ժամկետով անհատույց օգտագործման տրամադրել «Ֆուտբոլային ակումբ «Շիրակ» ՍՊԸ-ին՝ կնքելով համապատասխան պայմանագիր /պատասխանատու քաղաքապետարանի բյուջեի եկամուտների հաշվառման բաժին/:

3. Մարզադպրոցի աշխատակիցների հետ լուծել աշխատանքային պայմանագրերը և պարտավորեցնել ակումբին կնքել աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրեր, որոնք չպետք է վատթարացնեն աշխատակիցների աշխատանքային պայմանները:
4. Մարզադպրոցի սաների նկատմամբ իրավունքները ակումբին փոխանցելուց և ակումբի կողմից մարզադպրոցի աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրեր կնքելուց հետո 30 օրյա ժամկետում սկսել մարզադպրոցի լուծարման գործընթացը:
5. Ստեղծել լուծարային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝
Ռ.Հովհաննիսյան – քաղաքապետի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Գ.Աբրահամյան – քաղաքապետարանի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ
Ա.Ներսիսյան – ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ
Ս.Բաղդասարյան - քաղաքապետարանի տնտեսվար

4. Սույն որոշման 4-րդ կետով սահմանված պարտականությունների կատարումից հետո դիմել ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Գյումրու տարածքային բաժին՝ լուծարային գործընթացը սկսելու համար:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ
Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

| | | |
|---|---|---|
| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | |
| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ
Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ
Չ.ՁԱՐԳԱՐՅԱՆ
Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Մ.ՍԱՀԱԿՅԱՆ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Բ.ԱԼԵՔՍԱՆՈՎ

31 մայիսի 2011թ.
ք. Գյումրի